

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1(13)

Գլխավոր խմբագիր՝

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ՝

Գրիշա Ալեքսանի Ղարիբյան – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր.

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Հարություն Ալեքսանի Մարգարյան – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ռաֆիկ Ասրանազի Լախապետյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ Գարեգինի Մինասյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Արշավիրի Առաքելյան – պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Հայկ Մկրտիչի Դերձյան – իրավագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հենգել Գերասիմի Մանուչարյան – քաղաքագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Աննա Գրիգորի Ասատրյան – արվեստագիտութ. դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Պարզևի Մուրադյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սեդա Քերոբի Գասպարյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սեյրան Արտուշայի Զաքարյան – փիլիս. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր

Մելսիկ Պարզևի Մկրտումյան – հոգեբանութ. դոկտոր, պրոֆեսոր

Ակունք. Գիտական հոդվածների ժողովածու / Խմբ. խորհուրդ՝
Գ.Ա. Ղարիբյան և ուրիշ.: Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան. – Եր.:
ԵՊՀ հրատ., 2016 թ. – 394 էջ.

ՎԱԶԳԵՆ (ՏԻԳՐԱՆ ՏԵՐՈՅԱՆ)
/ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ/

ԿԱՐՈՆԵ ԵՄԱԶԱՐՑԱՆ

«Հասաջ, քաղաքակրթութիւնը միշտ գոն է պահանջել,
փառք է մեզ, եթէ երա արժանավոր գոնը լինենք»
Վազգեն

Տիգրան Տերոյանն (1872-1898 թթ.) առավել հայտնի է Վազգեն մականվամբ: Եւ իսկ ազգային-ազատագրական շարժման ակնավոր գործիչ է ն բանաստեղծ: Մկրտչապետ անվամբ գրվել է Արմենական կուսակցությանը, ապա ՀՅԴ-ին: Վազգենը սովորել է Վանի Հայկազյան Կենտրոնական վարժարանում: 1893 թ. ազատագրական գործունեության համար ձերբակալվել է Բանտից ազատվելուց հետո մասնակցել է 1896 թվականի Վանի «Մեծ դեպրիս»-ին: Դեմ է եղել Խանասորի 1897 թ. արշավանքին: Զոհվել է Վանից ոչ հեռու գտնվող Կուրուպաշ գյուղի ջրաղացում, երբ բուրքերը պաշարել էին երան և իր զինակից ընկերներին Արշակ Զալկաղրյանին և Եատայսցի Միքայիլին:

Բանայի բառեր. Տիգրան Տերոյան (Վազգեն), Զարուհի (Ժենյա), Մկրտչի Ավետիսյան (Թերյանեզյան), Մարտիկ (Մարտիրոս Սարուխանյան), Պետո (Ալեքսանդր Գեարուպան), Վան, ինքնապաշտպանություն, ազգային-ազատագրական պայքար, Հայ Հեղափոխական Դաշնակցություն:

Հայ ազատամարտի եվիրյալ, բանաստեղծ և հայդուկ Տիգրան Տերոյանը (Վազգեն) ծնվել է 1872 թ., Վան քաղաքի Այգեստան թաղամասում: Ուշիմ, աչքաբաց, ընդունակ ու աշխատասեր Տիգրանին բախտ է վիճակվում նախնական կրթությունը ստանալ Վանի Կենտրոնական վարժարանում: Լախակրթարանն ավարտելուց հետո, Տիգրանը 1876 թվականի աշնանը ընդունվում է Հանկույսների թաղամասում գտնվող Հանկույսների նախակրթարանը, որտեղ սովորեցնում էին արտասանել, հաշվել, հեքիաթներ, խմբակային երգեր, խաղեր, իսկ վերջին կիսամյակում գունավոր 8 միլիմետրանոց թղթերից խաիր գործել, որը համարվում էր ավարտական աշխատանք¹:

1878 թվականին Տիգրան Տերոյանն ընդունվում է Փոքրուզայանի Հայկազյան կենտրոնական դպրոցը: Հինգերորդ դասարանի աշակերտ Տիգրանը որոշում է թերթ հրատարակել և երա առաջարկությամբ դասարանական թերթը կրում է «Զգտում» անվանումը: «Զգտում» թերթը լուսարանում էր դպրոցական, դասարանական կյանքը, ուսումնադաստիարակչական հարցեր, աշակերտական օրինակելի շարադրություններ, ուտանավորներ, ասացվածքներ, նայրենասիրական հոդվածներ: Հայրենասիրական խմորումների հեղինակ վերածված Հանկույսների, ինչպես նաև Հայկազյան դպրոցում Վազգենի ուսանած տարիներն ապարդյուն չեն անցնում: Դպրոցական տարիքում էլ Վազգենը տոգորվում է հայրենասիրական, ազատասիրական գաղափարներով:

¹ Տե՛ս Երվանդ Երևակյան, Վազգեն, մի քանակի՞ր Վանի հերոսամատուցանում, Էջմիածին, 2014, էջ 16:

Թուրքական իշխանությունները տեղեկանալով, որ Հայկազյան դպրոցը աշակերտությանը դաստիարակում է ազգային-հեղափոխական ոգով, 1885 թվականին փակում են այն: Տիգրանի քույրը Զարուհի Տերոյանը (Ժենյա ծնված 1874 թվականին) 1880 թվականին ընդունվում է «Գայանեի» անվան դպրոցը: Քույր ու եղբայր խաղրնկերներ էին, դպրոցական կյանքը, եղելություններն իրար հետ էին կիսում, մտքեր փոխանցում ու քննարկում, հետազոտում էրկուսն էլ նետվում են հեղափոխական պայքարի հորձանուտ:

Փորթուգալյանի դպրոցը փակվելու պատճառով Տիգրանն իր ուսուցչությունում է անավարտ նետվելով կյանքի ասպարեզ, սկզբում հոր մոտ աշխատում է իբրև դերձակի աշակերտ քնտանիքի հոգսը հոգալու համար, ապա մեկ տարի անց՝ սկսում է դասավանդել դպրոցում: Հովհաննես Ազրիպատյանի և Մկրտիչ Ավետիսյանի պես խանդավառ ու գաղափարական ուսուցիչները մեծապես նպաստեցին Վազգենի, ինչպես նաև դպրոցի մյուս աշակերտների հեղափոխական գաղափարների ձևավորման վրա: Դպրոցականներից կազմվում է ինքնագարգացման խումբ: Երիտասարդական շարժումն ընդարձակվում, խտանում ու ավելի ընդգրկուն է դառնում, ինչին չէր կարող իր մասնակցությունը չցուցաբերել այքաբաց, բմբոստ բնավորության տեր, ազատասիրական գաղափարներով տոգորված Տիգրանը:

Թուրքական իշխանությունները մշտապես հսկում և հետևում էին ազատամիտ երիտասարդության գործունեությանը, որոնց այրից չվրիպեցին Վ. Գոյոշյանն ու Հ. Ազրիպատյանը: 1889 թ. մայիսի 26-ին տեղի ունեցած Զախյետուկի կռվում հերոսաբար զոհվեցին Հովհաննես Ազրիպատյանն ու Վարդան Գոյոշյանը²: Իր ուսուցչի Ազրիպատյանի ու նրա ընկերոջ մահը ցնցող տպավորություն գործեցին Տիգրանի վրա: Պետք էր խոսքից անցնել գործի: Վասպուրականի երիտասարդությունը բռնկված էր վրեժի բոցով, ուստի Տիգրանը սկսեց գործունեության խմբեր կազմակերպել, պատրաստել, ոգևորել նրանց:

Վանի վիլայեթն ուսումնասիրելու և այնտեղ հեղափոխական գործունեություն ծավալելու նպատակով 1890-91 թթ. Վան է ժամանում ազգային-ազատագրական պայքարի անվեհեր գործիչներից մեկը Պետոս (Ալեքսանդր Պետրոսյան): Վերջինս հանգրվանում է տերոյանների տանը: Բոցավառված ազգային-ազատագրական շարժման կազմակերպման գաղափարով, Տիգրանը մտերմանում է Պետոսի հետ դառնում նրա հավատարիմ զինակիցը: Տիգրանը որպես ազգային-հեղափոխական գործիչ ներկայանում է Վազգեն անունով:

Խելացի ու բռնիմաց ուսուցչի համբավ ունեցող Վազգենն իր գրավիչ լեզվով համախմբում է Վանի և գյուղերի երիտասարդությանը, կազմում հեղափոխական խմբեր, ղեկավարում դրանց: Տերոյանների տունը աստիճանաբար վերածվում է հեղափոխական գաղափարների դարբնոցի: Հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, Վանի 1915 թվականի ինքնապաշտպանության կազմակերպիչ Արամ Մանուկյանի հուշերում կա հետևյալ վկայությունը. «Վազգեննեց տունը, թէև այրի ընկած, յայտնի յհեղափոխական անցեալ ունեցող տուն էր, բայց եւ այնպէս մեր վստահելի տներէց մէկն էր: Մենք յա-

² Երվանդ Եջրանկյան, նշվ. աշխ., էջ 18:

Հախճապետի անունով հիմնադրված «Մանկավարժական կոնգրես»-ը, որը 1896 թվականին կայացավ Երևանում, նաև հանդիսանում էր հայկական մանկավարժության մեծագույն ժողովը։

Այսպիսով, հայկական մանկավարժության զարգացումը և կայուն դադարի գալուստը կապված էր հայկական մանկավարժության զարգացման հետ։

Մանկավարժական գործընկերության հիմնադրումը և կայուն դադարի գալուստը կապված էր հայկական մանկավարժության զարգացման հետ։

1893 թվականին խուզարկություն է կատարվում տերոյանների տանը։

Մեծագույն ժողովը կազմակերպված խմբերը պատկանելի ուժ էին կազմում Վասպուրականում։ Աղբյուրի Օգանյանը Տարուհի և Սասունի կրթիվներին մասնակցելուց հետո, 1896 թվականի գարնանը տեղափոխվում է Վան և զինվորագրվում Վազգենի խմբին։ Վազգենն առավել երանգուն է լծվում Պարսկաստանից Վան գնալու ու զինամթերք փոխադրելու թեև դժվարին, բայց խիստ անհրաժեշտ գործին։ Թուրքական իշխանություն-

¹ Տե՛ս *Անտոնյան Ա.*, Ժողովածու երկերի, Խառոթ կիսգրքորդ, Ազատության ճանապարհին, Քրիստոսաբար Միքայելյան, Անտոնյանի, Բոտորն, 1948, էջ 163-171:

² Արամբ, Մանուկոս յիսնամյակին առթիւ, «Միքայել Վարսեղյան» հրատ., Երևան, 1991, էջ 284:

³ 1896 թվականի ամռանը Վանի ինքնապաշտպանության ժամանակ Պետոն գտնվում է Պետոյի մանկից հետո Տարուհին, որին Պետոն էր կնքել ժենյա անունով, երգվում է այնու չամուսնանալ, և կախատարին է մնում իր երգմանը:

⁴ *Վանի Փառապանակ*, Էմ յուշերը, Խառոթ առաջին, «Հայրենիք» տպարան, Պապրն, 1950, էջ 143:

ների ամենամեծ աչքին չի վրիպում Վազգենի գործունեությունը: Երանք ան-
գաղթում կերտով քանում էին իրենց ձեռքը գցել Վազգենին (իրականացնում
էին անցնողն առ հետապնդումներ, խուզարկություններ տերոյանների տանը),
բայց անօգուտ: Վազգենը արհամարհելով թուրքական իշխանությունների հե-
տապնդումները, էլ ավելի եռանդուն գործունեություն է ծավալում հայդուկա-
յին խմբերի հավաքագրման, հեղափոխական քարոզչության ու ինքնապաշտ-
պանական խմբեր կազմելու գործում:

1896 թվականի հունիսի 3-ին թուրքական կանոնավոր զորամասերը,
քրդական «Համիդիե» գնդերն ու մահմեդական խուժանը հարձակվեցին Վանի
վրա: Վանեցիները համառ դիմադրություն ցույց տվեցին համախմբվելով
Ալբրտի Ավետիսյանի (Թերլեմեզյան) և Մարտիկի (Մարտիրոս Սարուխան-
յան) շուրջը: Շան թաղի կռիվներում Վազգենն ինքնապաշտպանության դե-
կավարներից էր: Հայերն այստեղ լուրջ դիմադրություն կազմակերպեցին և ետ
շարժեցին թշնամուն: Թուրքական կառավարությունը Վան ուղարկեց նոր
ուժեր: Թուրքական զորքը չկարողանալով գրավել քաղաքը՝ ավերակների
կույտի վերածելով այն հրդեհեց ու ավերեց: Քանդեցին բազմաթիվ բնակա-
վայրեր, խարխուլեցին որոշ պաշտպանական ամրություններ, սակայն չկարո-
ղացան բնկճել հայերի դիմադրական ոգին, աննկուն կամքն ու միասնությու-
նը: Ինքնապաշտպանները ոչ միայն հաջողությամբ ետ էին մղում թուրքական
զրոհները, այլև իրենք էին անցնում հակազրոհների, որոնց ընթացքում նրանց
հաջողվեց գրավել թշնամու երկու բնդանոթ⁸: Այնուամենայնիվ, զգացնել էր
տալիս գեներ - գինամթերքի, ինչու չէ, նաև փորձառու կովոդների պակասը:
Ուստի, անիմաստ համարելով թուրքական գերակշիռ ուժերի դեմ դիմադ-
րությունը, հայերը դիմեցին անգլիական հյուպատոսի միջնորդությանը և ու-
րոշեցին դիմադրությունը դադարեցնել ու հեռանալ երկրից: Վանեցիները հա-
մաձայնում են Վանի անգլիական հյուպատոս Վիլեամսի և թեմական առաջ-
նորդ Սահակ վարդապետ Բագրատյանի առաջարկությանը՝ դիմադրությունը
դադարեցնելու մասին: Իշխանությունները խոստանում են թույլ տալ ազա-
տամարտիկներին և նրանց միացած ժողովրդին անարգել հասնել Պարսկաս-
տան: Սակայն ճանապարհին 200 զինված ու 600 անզեն հայեր պաշարվում են
մահմեդական քրդերի ու թուրքերի 8-10 հազարանոց զորամասերի կողմից,
10-12 օր կատաղի կռիվ մղելով հերոսաբար նահատակվում, փրկվում է ըն-
դամները 30-35 հոգի: Ռուբեն Տեր-Մինասյանի հուշերում կարդում ենք հետևե-
լալը. «Նումբը կիջնե Աղբակի դաշտը եւ Ս. Բարթուղիմէոս վանքի շրջակայքը:
Այստեղ կը պաշարուի բազմաթիւ քիւրտերէ ու գօրքի կողմէ: Տեղի կունենա
կատաղի կռիւ մը: Խումբը յուսահատ ճիգեր կընէ, բայց բոլորը յոգնած են շա-
րունակական կռիւներէ եւ երկարատեւ ճանապարհէ, եւ չեն յաջողիր ձեռքել
թշնամիի շղթան: Մէկը միւսի ետնէ կը կռտորուին բոլորը Ս. Բարթուղիմէո-
սի Լախավկայի ուտքերուն տակ»⁹: Կովում քրդերը շրջապատում են Պետոյի
ու Մարտիկի խմբերը, որոնք արիաբար կովում և հերոսաբար զոհվում են:
Մինչև Պարսկաստան մեկնելը Վազգենին հաջողվում է 70-80 քաջերով բարձ-

⁸ Տե՛ս *Երվանդ Երզնկյան*, նշվ. աշխ., էջ 37:

⁹ Տե՛ս *Ռուբեն Սահակյան*, Վազգեն (Տիգրան Տերոյան), «Գրօշակ» պաշտոնաթերթ շաբաթաթիվային հարկանցութեան, 1998, թիվ 6, էջ 24:

¹⁰ *Ռուբեն շաբաթաթիվային* մը յիշատակները, հաստք Բ, Թեհրան, 1982, էջ 105:

բանալ Վարապա լեռը Կա ճանապարհին վիրավորվում և պատապարվում է մասակա անտառում: Այնուղ թաքնված երիտասարդների տարրեր գյուղերից ու գավառներից էին, որոնք հավաքվում են Վազգենի շուրջը: Վերջինս նրանց ոգևորում է չրեկձվելու և պայքարը շարունակելու, երիտասարդական խմբերը մեծացնելու և արասասանմանից զեր ու գինամթերք փոխադրելու գաղափարներով:

Վազգենը 1896 թ. օգոստոսի 2-ին և 7-ին նամակներ է գրում Թավրիզի և Տրապիզոնի կոմիտեներին Վանի ինքնապաշտպանության ու կուտորածի մասին, ինչպես նաև հայտնում Պետոյի մահվան բոցը¹⁰: Վազգենի կարծիքով Մարտիկի ու Պետոյի խմբերի նահատակության պատասխանատվությունն ամբողջովին ընկնում է Պարսկաստանի կազմակերպության վրա, որի «մեռելային զանգաղկոտութիւնէն... Պետոն վճռեց անձամբ զնայ եւ մեռածները սքափեցնելով մէկտեղ գործերու մասին տեղեկանայ, յնայելով, որ իր հետ մնացած ուժերը շատ թոյլ, անփորձ էին, առանց ճանապարհի պատրաստութեան»¹¹: Այսպիսով, Վասպուրականի երեք կուսակցությունների ղեկավարները, իրենց հետևորդների հետ նահատակվեցին ազատության ճանապարհին: Դա ծանր հարված էր Վասպուրականի համար, կանհետանար երիտասարդության ամենակենսունակ ու ուժեղ տարրը, նրա մտավորական խավը: Ընչակյան կուսակցությունն ու արմենականները գրեթե դադարեցրեցին իրենց գոյությունը Վանում, բայց ամբողջությամբ չոչնչացան: Դաշնակցությունը կարողացավ պահպանել, իսկ հետագայում ընդլայնել ու ծավալել իր ուժերի մի մասը: Ռուբեն Տեր-Մինասյանի վկայությամբ. «Պետոյի ու իր հետևորդներու մահը այնքան ճակատագրական նշանակություն չունցաւ Դաշնակցութեան համար, որովհետեւ կային մարդիկ, որ յաջորդեցին անոնց եւ նոր ու ամուր հիմքերու վրայ դրին դեռ երիտասարդ այդ կազմակերպութիւնը, որուն վիճակուած էր շարունակել Աւետիսեանի եւ Մարտիկի մահով ընդհատուած գործը»¹²:

Վանի ինքնապաշտպանության տխուր ավարտը խորապես ցնցել, ընկճել ու հիասթափեցրել էր Վանի հայությանը: Որոշ մարդիկ բացահայտ թշնամանք ու ատելություն սկսեցին տածել հատկապես ազգային-ազատագրական գաղափարներ տարածողների հանդեպ: Ռուբեն Տեր-Մինասյանի կարծիքով. «Պատահած բոլոր դժբախտութիւնները ժողովուրդը կը վերագրէր ազատութեան խօսքը քարոզողներուն: Ան իր վշտի ու կսկիծի ազդեցութեան տակ մոռացեր էր, որ իր դժբախտութեան պատճառը ան էր, որ ինքնագիտակցութեան եկեր էր եւ որ կառավարութիւնը ատոր հետեւանքով էր, որ կը հալածէր ու կը կոտորէր զինքը: Միւս կողմէ, ժողովուրդին համակրութիւնը, առաջ դէպի Արմենականներն էր եւ այս վերջիններս գլխատուելէ յետոյ, Վանի մէջ խիստ նուազեր էր թիւը կուռ համոզումներ ունեցող մարդոց: Իսկապէս ծանր կացութիւն մը ստեղծուած էր Տերոյանի եւ Վարդանի համար, որոնք վճռած էին եր-

¹⁰ Տե՛ս *Նրվանդ Եիրակյան*, էջվ. աշխ., էջ 39:

¹¹ Տե՛ս *Ռուբեն Մահակյան*, Վազգեն (Տիգրան Տերոյան), «Դրօշակ» պաշտոնաթերթը Հայ յեղափոխական դաշնակցութեան, 1998, թիվ 6, էջ 24:

¹² *Ռուբեն*, էջվ. աշխ., էջ 106:

կիրք և ժողովուրդը շքողենել¹³։ Անգլիական միսիան ևս իր բացառական դե-
րը խաղաց Վանի հայությանը արամադրելով ազգային կուսակցությունների
դեմ։ Ժամանակ էր պետք, որպեսզի վերականգնվեր ժողովրդի հույսն ու հա-
վատը, սերն ու համակրանքը ազգային-կուսակցությունների նկատմամբ։
Վազգենի համար բաներով հուսալքումը հեռագինտի մարեց։ Կարճատև դու-
րսից հետո, 1896 թ. ամռանը կազմակերպվում է Պարսկաստանից Ղևաթի եր-
կիր հայդուկային ու զինատար խմբերի մուտքը։ Հայդուկային մի քանի խմբեր
հաստատվում են Վանում ու շրջակա գավառներում նայատակ ունենալով ու-
ժեղացնել տեղի ուժերը, որոնք ջլատվել էին հունիսյան դեպքերից հետո։

Ավներն է, որ Վազգենը մեծ հույսեր էր կապում Վանի հայության հետ։
Ժաջ գիտակցելով ժողովրդի ցասումն ու բողոքը, ճանաչելով վանեցու բնավո-
րությունը, Վազգենն ըմբռնում է, որ ժողովուրդը հուսալքվել է ժամանակ է
պետք, որպեսզի դուրս գա այդ վիճակից և կրկին լարի իր ուժերը համիդյան
բռնատիրության դեմ։ Վազգենն ու Վարդանը աստիճանաբար, ասանց շտա-
պելու վերականգնում են Ղաշնակցության դիրքերը Վանում և շրջակա հայ-
կական գյուղերում։ Բնչպես վկայում է Ռուբեն Տեր-Մինասյանը. «Զարիուրելի
փոքորկեն յետոյ, անկուռն Տերոյեանի ու շրջահայեաց Վարդանի համար այդ-
չափն այ կը բաւէր»¹⁴։ Եւ հույս էր հայտնում, որ ձմեռվա բնթացքում կկարո-
ղանա վերականգնել խմբերը և քայքայված ուժերը։ Վազգենն այն տեսակե-
տին էր, որ պետք է սկսել տեղական գանգվածային շարժում ժողովրդից
բխած ընդհանուր գործ, բայց մինևույն ժամանակ անհրաժեշտ էր համարում
երկարատև կռիվը ցույցերի, ահաբեկումների, խմբային գործողությունների
միջոցով։ «Գործողության մասին մեր կարծիքն է եղած պատրաստի ուժերով
կռիվը շարունակել անընդհատ, ցույցեր, շարժումներ անպակաս անել թե քա-
ղաքներու, և թե գավառներու մեջ։... Ամեն ջանք թափել ռումբեր և դինամիտ
ներմուծել գավառները, որոնք ապստամբական մեծ շարժումներու ժամանակ
շատ գործ կարող են կատարել»¹⁵, - այս կարևոր խնդրի մասին գրում է Վազ-
գենն իր 1896 թ. դեկտեմբերի 23-ի թվակիր նամակում։ Առաջարկվում է դրա-
մով զինել, գործակցություն հաստատել ասորիների հետ, պատրաստվել ընդ-
հանուր ապստամբության համար։ Վազգենին հատկապես ոգևորում էր այն
հանգամանքը, որ ժողովուրդը դուրս էր եկել թմբիքից և աշխուժորեն օգնում
էր Ղաշնակցությանը։

Վազգենին մեծ վիշտ ու ցավ էր պատճառում նախ մոր, ապա քրոջ Զա-
րուհու բանտարկությունը, որոնք Վազգենի հեղափոխական գործունեության
պատճառով էին գտնվում փակի տակ։ Թեև, այս ամենը չէր ընկճում ու չէր
հուսալքում Վազգենին, որն անվիատ շարունակում էր հեղափոխական գործը
և արտասահմանի ընկերներին ոգևորված հաղորդում, որ 1897 թվականի
գարնանը Վան քաղաքում ու գավառներում արդեն կազմված են հեղափոխա-
կան կազմակերպություններ ու խմբեր։ Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է

¹³ Լույս տեղում, էջ 107։

¹⁴ Լույս տեղում, էջ 106։

¹⁵ Երվանդ Եփրակյան, նշվ. աշխ., էջ 39։

ենակալը «Ձայն քահայրագոսողը եսքի եւ սոսոջ Վասպուրականն էր, որ
մտրկութեան մէջ էր»¹⁶

Այդ ժամանակ շՅ՝ Սալմաստի կոմիտեն պատրաստվում էր ետեւա-
1896 թ. ինքնապաշտպանության ժամանակ մասնակցել էր ետեւանոց Մկր-
տի Ավետիսյանի խմբի կատարածին: Վազգենն էլ, Վարդանի, Էշխանի և ու-
րիշների հետ համամիտ չէր արշավանքին դրօշից: Հունիսի վերջերիս ետ անց-
եում է Սալմաստ, ծանոթանում գործերի գրությանը, կատարված աշխա-
տանքներին և համաձայնության գալիս ետխապատրաստվող ձեռնարկի
չուրջ: Արտշվում է մարտիկների ու ռազմամթերքի մի մասը մտցնել Վասպու-
րական, իսկ մնացածով կազմակերպել արշավանքը: Վազգենը հափառարիմ
մնալով իր որդեգրած ուղուն, հուլիսի 15-ին, 30 ընկերներով ու մեծ քանա-
կությամբ գնացավ, մեկնում է Վան: «1897 թ. աշնանը Վան մտաւ Վազգենի
Տիգրան Տերոյանի գինակիր խումբը: Վասպուրականի երիտասարդութիւնը
գրկաբաց ընդունեց Պետոյին աշակերտած եւ կոխներու մէջ թրծուած այդ
մտաւորական հայդուկը: Այդ խումբին մէջ էր ետաւ Անդրանիկը, իբր պարզ
գինուոր, որ Գուրգենի հետ անցաւ Տարօն»¹⁷, կարդում ենք Վահան Փափագ-
րանի հուշերում: Վազգենի հետ էին արդէն մեծ հոշակ վայելող Շատախցի Մի-
ուրիշներ: Սալմաստի Դալասար գյուղում սկարվելուց հետո խումբը, Սուրբ
մատ քրդերի հետ ընդհարում ունենալուց հետո, խումբը ապահով հասնում է
Վան: Վազգենի հայտնվելը Վանում, կրկին անհանգստության տեղիք է տալիս
իշխանություններին, սկսվում են խուզակություններ, ձերբակալություններ:
Կառավարությունը սկսում է դիմել խիստ միջոցների: Տեսնելով, որ իր պատ-
ճառով կարող է տուժել ժողովուրդը, Վազգենն իր երկու գինակից ընկերների
Մուրոյի և Արշակ Չալկաղրյանի հետ, ձմռան ցրտին հեռանում են քաղաքից
աշխատանքը գաժառներում շարունակելու համար:

1898 թ. հունվարի 21-ին, երբ նրանք ապաստանել էին Վանից շուրջ 7
կիլոմետր հեռավորության վրա գտնվող Կուռուպաշ գյուղի ջրաղացում, թուր-
քական 60 հոգանոց ջոկատը շրջապատում է ազատամարտիկներին: Վազգե-
նը, Միքոն ու Արշակը փորձում են կովով ձեռքել թուրք զինվորների շղթան
դեպի Վարազա սար, փամփուշտները վերջանում են և երեքն էլ գոհվում են
արիաբար: Երեքի աճյունները կողք կողքի ամփոփվում են Վանի Արարոց
Սուրբ Աստվածածին Մայր եկեղեցու «Խաչաբակ» գերեզմանատանը:

Վարազդատ Տերոյանի հուշերում կարդում ենք. «1898 թ., 28 տարի ա-
ռաջ Տաճկաստանում (Թուրքիա) սպանված եղբայրս եղել է դաշնակցական»¹⁸:

Վազգենի մահը ծանր հարված էր շՅ՝-ի ու Վասպուրականի հայության
համար, որոնք սգացին նրա կորուստը:

1901 թ. Բոստոնում տպագրվում է Վազգենի երգերի ժողովածուն «Վազգե-
նի երգարան» խորագրով, իսկ 1906 թ. Մննում լույս է տեսնում Անդրանիկի

¹⁶ Առաքել, նշվ. աշխ., էջ 108:

¹⁷ Վահան Փափագեան, նշվ. աշխ., էջ 141:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 1730, ց. 1, գ. 45, թ. 3:

«Մարտական հրահանգներ» կանոնադիրը, որը համարվում էր արևելահայերի և բնիկ
մյուս փառասիրտ հայրերի նվիրում է նաև Վազգենի անունը հիշատակելով

Карине Егшиазарян - Вазген(Тигран Тероян)/Жизнь и деятельность/ - Тигран Тероян (1872-1898гг.), наиболее известный по прозвищу Вазген - известный деятель народного освободительного движения и поэт. Вначале вступил в партию Арменакан, затем в АРФД. Вазген учился в Айказском центральном училище Вана. Был арестован в 1893г. из-за освободительной деятельности. После выхода из тюрьмы участвовал в «большом событии» Вана в 1896г. Был против похода Ханасора в 1897г. Погиб в мельнице села Курубаш неподалеку от Вана, когда турки блокировали его и его боевых товарищей Аршака Чалкадаряна и Шатахтси Мико.

Karine Eghiazaryan - Vazgen(Tigran Teroyan)/ Life and activity/ - Tigran Teroyan (1872-1898), more known as sobriquet Vazgen, was a famous doer of national liberation movement and poet. At first he joined Armenakan party, then ARFD. Vazgen studied at Haykazyan central specialized school. He was arrested in 1893 for liberation activity. After getting out of jail, took part in «great events» of Van in 1896. He was against campaign of Khanasor in 1897. Tigran died in the mill of village Kurubash not far from Van, when Turks blocked him and his comrade -in-arms Arshak Chaldaryan and Shatakhtsi Miko.